# ՕՏԱՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

## ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՋՐՈՒՅՑԸ ԱՆԳԼՈ-ՍՈՎԵՏԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԴԵԼԵԳԱՑԻԱՅԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ

Երևանում գտնվող անգլո-սովետական բարեկամության ընկերության դելեգացիայի անդամները հոկտեմբերի 29-ին զրույց ունեցան տեղական մամուլի ներկայացուցիչների հետ։

Անգլիական հյուրերին տրվեցին հետևյալ հարցերը.

1. Ի՞նչ տպավորություն են ստացել նրանք Սովետական Հայաստանի, նրա տնտեսական և կուլտուրական շինարարության մասին։

2. Ի՞նչ կարծիքի են դելեգացիայի անդամները արտասահմանյան հայերի իրենց հայրենիքը վերադառնալու մասին։

3. Ի՞նչպես է վերաբերվում Անգլիայի հասարակայնությունը Թյուրքիայի կողմից զավթված բնիկ հայկական հողերը վերադարձնելու հարցին։

Դելեգացիայի ղեկավար պ-րն Ստենլի Էվանսը հայտարարեց.

— Ակնհայտ է Հայաստանի ժողովրդական ամբողջ տնտեսության մեծ առաջադիմությունն ու զարգացումը, որը տեղի է ունեցել Սովետական իշխանության գոյության ժամանակաշրջանում։ Մենք նշում ենք նաև բնակչության կենսամակարդակի բարձրացումը։ Մեզ վրա առանձին տպավորություն գործեց Երևանի էլեկտրիֆիկացման վիթխարի պլանը, ինչպես նաև Երևանում իրագործված բնակարանային շինարարությունը։

Երբ մենք զրուցում էինք ռեսպուբլիկայի Լուսավորության Մինիստրի հետ,—ասում է այնուհետև պ-րն Էվանսը,—մենք իմացանք, որ բնակչության 30 տոկոսը սովորում է դպրոցներում։ Պետք է խոստովանել, որ մենք սկզբում դրան չհավատացինք։ Սակայն գործի հետ մոտիկից ծանոթանալով մենք համոզվեցինք, որ դա ճիշտ է, որովհետև հայ բնակչության զգալի մեծամասնությունը կարդում է երիտասարդությունը։

Անգլիական պառլամենտի անդամ Յուլի Սիլվերմենը հաղորդեց իր տպավորությունները Սովետական Հայաստանի կուլտուրայի մասին։

— Սովետական Միությունն ժամանելուց հետո,—ասաց նա,—մեր դելեգացիան ամենուրեք տեսավ ընդհանուր ձգտում դեպի ուսումը։ Պետք է ասել, որ այնպիսի լայն մասշտաբով ուսուցում, ինչպիսին կա Հայաստանում, մենք ոչ մի տեղ չենք տեսել։ Ռեսպուբլիկայի կառավարությունը բաց է թողնում մեծ միջոցներ լուսավորության գործի համար և դա ապագայում անշուշտ կտա իր պտուղները։

Մեզ վրա հաճելի տպավորություն թողեց այն, որ Սովետական Հայաստանում կան շատ թատրոններ, և այդ թատրոնները, ինչպես նաև Սովետական ամբողջ Միությունում, հանրամատչելի են, ինչպես աշխարհում ոչ մի տեղ։

Դելեգատները նշեցին Սովետական Միությունում թատերական բեմադրությունների հսկայական դաստիարակչական նշանակությունը։

Այն հարցին, թե ի՞նչ կարծիքի են դելեգացիայի անդամները արտասահմանյան հայերի Սովետական Հայաստան ներգաղթելու մասին, պատասխանեց դելեգացիայի ղեկավար պ-րն Էվանսը։

— Այդ հարցում,— ասաց նա,—մեր դելեգացիայի և անգլիական հասարակայնության

կարծիքները միասնական են։ Մենք իմացանք, որ Հայաստանի կառավարությունը մեծ հնարավորություններ է տալիս ամբողջ աշխարհում ցրված հայերին հայրենիք վերադառնալու համար։ Մենք գտնում ենք, որ դա Հայաստանի համար մեծ գործ է. մենք ավելի քան երջանիկ կլինենք, երբ իմանանք, որ բոլոր արտասահմանյան հայերը հնարավորություն կստանան վերադառնալ իրենց հայրենիքը։

— Նույնիսկ քաղաքականապես քիչ զարգացած անգլիացին, որը ծանոթ չէ Հայաստանի պատմությանը, գիտե, որ թյուրքերը կոտորել են հայերին, դիտե, որ այդ ժողովուրդը շատ է տանջվել և նա նրան համակրում է,—ասաց պ-րն Բիշոպը։— Անգլիա վերադառնալուց հետո մենք կաշխատենք այդ դեռևս չձևավորված համակրանքը դարձնել ձևավորված հասարակական կարծիք։

Անգլիական պառլամենտի անդամ պ-րն Սիլվերմենը հայտարարեց, որ դեռ միևչ Սովետական Միություն ժամանելը նա դիտեր, որ հազարավոր արտասահմանյան հայեր գալիս են Սովետական Հայաստան։

— Սակայն միայն այստեղ ժամանելուց հետո,—ասաց նա,—ես հասկացա և ինձ պատկերացրի այն մեծ աշխատանքը, որ այդ ուղղությամբ կատարում է Սովետական Հայաստանի կառավարությունը։

Միավորել ամբողջ աշխարհում ցրված հայ ժողովրդին, ստեղծել բոլոր պայմանները հայերի ներգաղթի համար՝ հնարավոր է միայն Սովետական իշխանության օրոք որը ապահովում է նրանց անվտանգությունը և վաղվա նկատմամբ նրանց վստահությունը։ Կրկնում եմ, միայն սովետական իշխանության օրոք հնարավոր էր ձեռնամուխ լինել ներգաղթի այդպիսի մեծ պլանի իրագործմանը։

Մեզ իրազեկ են դարձրել ներգաղթի թույլտվություն տալու վերաբերյալ սովետական կառավարության որոշման առթիվ արտասահմանյան հայերի արձագանքներին և արտասահմանյան հայերի Սովետական Հայաստան գալու հսկայական ցանկության վերաբերյալ։

Թյուրքիայի կողմից բռնի կերպով անջատած հողերը Սովետական Հայաստանին վերադարձնելու հարցի մասին արտահայտվեց անգլիական պառլամենտի անդամ պ-րն Սիլվերմենը։

— Դժբախտաբար,—ասաց նա,—անգլիացիների մեծ մասը Սովետական Հայաստանի մասին քիչ բան դիտի։ Մենք՝ Սովետական Հայաստան ժամանած դելեգացիայի անդամներս հասկանում ենք, որ այդ հարցը ձեզ համար կենսական նշանակություն ունի։ Այդ պրոբլեմը արտացոլում է հայ ժողովրդի խոր զգացմունքներն ու իղձերը։ Վերադառնալուց հետո անգլիական ժողովրդին կպատմենք այդ զգացմունքների և իղձերի մասին։

— Այդ հարցը իմ կարծիքով,—ասում է այնուհետև պ-րն Սիլվերմենը,— կարելի է լուծել Միավորված Ազգերի կազմակերպության աջակցությամբ։

Դելեգացիայի ղեկավար պ-րն Իվանսը իր հերթին ասաց.

— Ես կարծում եմ, որ այդ հարցի առթիվ այստեղ պետք է անկեղծ խոսել։ Երբ մենք ժամանեցինք Սովետական Հայաստան, տեսանք, որ բռնի կերպով Թյուրքիայի կողմից անջատված հողերի վերադարձումը Սովետական Հայաստանին՝ հանդիսանում է գործնական հարց և որ առանց այդ խնդրի լուծման Հայաստանը չի կարող ընդունել ամբողջ աշխարհում ցրված հարյուր հազարավոր հայերին։

***

Երևան այցելած անգլո-սովետական բարեկամության ընկերության դելեգացիայի անդամ, «Ռուսաստանն այսօր» ժուռնալի խմբագիր Ռեջինալդ Բիշոպը մամուլի ներկայացուցիչներին հանձնեց հետևյալ հոդվածը։

## ՌԵՋԻՆԱԼԴ ԲԻՇՈՊ

Աշխարհում չկա մի այլ ազգ, որը կարողանար ավելի հեշտությամբ նվաճել բրիտանական ժողովրդի բարեկամությունն ու համակրանքը, քան հայերը։ Մեզանում նույնիսկ քաղաքական տեսակետից ամենահետամնաց և վատ իրազեկ մարդիկ լսել են հայկական կոտորածների մասին։ Նրանք կարող են չիմանալ այդ գազանություններին ուղեկցած հանգամանքների մասին շատ բան, կարող են նույնիսկ չիմանալ, թե որտեղ են տեղի ունեցել այդ գազանությունները, նրանք կարող են չիմանալ, թե որտեղ է գտնվում Հայաստանը,—բայց այն մասին, որ հայերը անցյալում եղել են հալածված ժողովուրդ, նրանք գիտեն և որպես այդպիսի ժողովրդի նրանք պատրաստ են բանալ իրենց սրտերը։

Ես կարծում եմ, որ մեր դելեգացիայի յուրաքանչյուր անդամ ապշեց տեսնելով, թե որքան շատ բան է արված սովետական

իշխանության անցած ժամանակաշրջանի 25 տարվա ընթացքում՝ Հայաստանը կուլտուրական, արդյունաբերական և մյուս տեսակետներից յարգացնելու համար։

Դեռ ավելի ևս շատ բան պետք է արվի, բայց այն, ինչ կատարված է, հանդիսանում է լավագույն հնարավոր նախանշանը ապագայի համար։

Երևանում հայ ժողովուրդը ունի մեծ ազգին արժանի մայրաքաղաք։ Նրա ծառերով պատած լայն փողոցները և հոյակապ շենքերը խիստ հակապատկեր են ներկայացնում բլուրի վրա դեռ մնացող հին քաղաքի մնացորդների համեմատությամբ։

Գյուղական վայրերում տները դեռ պրիմիտիվ են, բայց այստեղ ևս մեծ քանակությամբ նոր կառուցված շենքերը խոստանում են, որ հայերի ապագա սերունդները կունենան գյուղեր, որոնցով նրանք կկարողանան հպարտանալ նույնպես, ինչպես այսօր նրանք հպարտանում են իրենց մայրաքաղաքով։

Կրթության տարածումը չտեսնված է։ Աշխարհում ոչ մի այլ չի կարող պարծենալ նրանով, որ նրա բնակչության 20 տոկոսից ավելին գտնվում է դպրոցում։ Իհարկե, դրա համար կան հատուկ պատճառներ, բայց նրանք չեն փոխում այն փաստը, որ այդպիսի ինտենսիվ կրթական աշխատանքը կզարգացնի հայ ժողովրդին, որը ունենալով բոլոր հնանալի մարտական հատկությունները, կունենա նաև լայն կուլտուրա, որը

Անգլո-սովետական բարեկամության ընկերության դելեգացիայի անդամներն Էջմիածնում.

անցյալում ունեցել են միայն քչերը։

Արդեն այժմ այդ կուլտուրական կյանքը հոսում է շատ ուղղություններով։ Այդ բանը մենք տեսանք ձեր թատրոններում, որտեղ այդ կուլտուրան մեզ թվաց շատ նրբին։ Ի դեպ, ամբողջ աշխարհում չի կարող լինել այդ մասշտաբի մարդկանց մի այլ հասարակություն, որը կարողանար պարծենալ 26 թատրոնով, էլ չենք խոսում թատերական արվեստի ինստիտուտի մասին։

Աղքատ և հետամնաց հողագործական երկրից, որը ստրկացված էր օտարերկրյա լծի տակ, Հայաստանը վերածվեց առավելապես արդյունաբերական էկոնոմիկա ունեցող ազատ երկրի, այն միջոցին, երբ նրա հողագործական արտադրությունը զարգացավ ինչպես քանակական, այնպես էլ որակական տեսակետից։

Մենք հասկանում ենք, թե ինչու հայերը ամբողջ աշխարհից ձգտում են վերադառնալ իրենց հարազատ հողը։ Նրանք իրենց

կողմից է՛լ ավելի կհարստացնեն հսկայական առաջադիմության հորձանքը։

Մեծ Բրիտանիայում քիչ բան է հայտնի Սովետական Հայաստանի, այդքան հեռու գտնվող փոքրիկ երկրի մասին։ Մենք մեր պարտքը կհամարենք նրա մասին տարածել ճիշտ պատկերացում մեզ մատչելի բոլոր միջոցներով։ Մենք կնշենք արդեն ձեռք բերված մեծ առաջադիմությունը և այն հսկայական ջանքերը, որ երկիրը կատարում է հնգամյա նոր պլանի ընթացքում. Մենք կանենք նաև այն, ինչ որ մեր ուժերը ներում են, որպեսզի պարզ դարձնենք Թյուրքիայի տիրապետության տակ գտնվող հին տերիտորիաները վերադարձնելու հայկական պահանջների բնույթը։ Մենք կփորձենք պարզ դարձնել, որ այդ տերիտորիաներում 1915-1920 թվերին կոտորվել է մեկ միլիոն հայություն և ավելի ևս մեծ քանակությամբ հայեր աքսորվել են և փախուստի դիմել։ Մենք կնշենք, որ մեկ ու կես միլիոն հայերի նկատմամբ արդարությունը հնարավոր չէ կենսագործել ամբողջ աշխարհում, մինչև որ նրանց համար մատչելի չի դառնա այդ հողը որպես ազատ Սովետական Հայաստանի անբաժան մասը։

Մենք չենք փորձի Հայաստանը նկարագրել որպես մի դրախտավայր։ Ավելի շուտ կփորձենք մեր տպավորությունները շարադրել այն դիտողության ոգով, որ 18 ամիս առաջ բրիտանական պառլամենտական դելեգացիային արել է գեներալիսսիմուս Ստալինը։ Դելեգացիան նրան հարցրել է, թե ինչպես կարող է ավելի լավ ծառայել բրիտանա-սովետական հարաբերություններին։ Նա պատասխանել է, ասելով, որ ամենից լավն է տուն վերադառնալով պատմել ամբողջ ճշմարտությունը այն մասին, ինչ դելեգացիան տեսել է Սովետական Միությունում, թե վատը և թե լավը։ Մենք այցելել ենք Սովետական Միության շատ մասեր և տեսել ենք, թե ինչպես մեծ երկիրը ոտքի է կանգնում այն բոլոր զոհաբերությունների ու տառապանքների տարիներից, որ բաժին են ընկել միայն մի քանի երկրների։

Մենք տեսանք շատ այնպիսի բաներ, որ պետք է բարելավել, բայց է՛լ ավելի շատ այնպիսի բաներ, որոնք հիացմունք են առաջացնում։ Եվ վերջին տեղը չէին գրավում հիացմունք առաջացնող այն բաները, որ մենք տեսանք Սովետական Հայաստանում։

Մեր երկրների բարեկամությունը սովետական ժողովրդի, ինչպես նաև բրիտանական ժողովրդի համար հանդիսանում է խաղաղության, անվտանգության և բարգավաճման էական հիմք։

Մեր դելեգացիայի անդամները Հայաստանի և հայերի նկատմամբ կպահպանեն առանձնապես ջերմ բարեկամություն այն սրտագին վերաբերմունքի համար, որ նրանց ցույց տրվեց այստեղ գտնվելու ժամանակ։

(Թարգմանություն անգլերենից)

## Պ-ՐՆ ԴԵՆԻՍ ՆՈԵԼ ՊՐԻՏՏԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Սեպտեմբերի 14-ին Երևան ժամանած անգլիական ականավոր հասարակական գործիչ, ՍՍՌՄ-ի հետ կուլտուրական կապի անգլիական ընկերության նախագահ, պառլամենտի անդամ պ-րն Դենիս Նոել Պրիտտը և ՍՍՌՄ-ի հետ կուլտուրական կապի անգլիական ընկերության քարտուղար տիկին Ջուդիթ Տոդդը, երեք օր անցկացնելով Հայկական ՍՍՌ-ում, ծանոթացան ռեսպուբլիկայի կուլտուր-լուսավորական և գիտական հիմնարկությունների հետ։

Հյուրերը այցելեցին Երևանի Կրուպսկայի անվան իգական դպրոցը, Ջեռագրատունը (Մատենադարանը), Կերպարվեստի պետական թանգարանը։ Նրանք եղան նաև Սպենդիարովի անվան օպերայի և բալետի Պետական թատրոնում, որտեղ լսեցին «Ալմաստ» և «Արշակ երկրորդ» օպերաները։

Հյուրերը դիտեցին պատմական վայրերը, այցելեցին էջմիածինը, որտեղ զրույց ունեցան կաթողիկոս Գևորգ Զ-ի հետ։ Նրանք եղան № 3 սովխոզում, Վերին Արտաշատ գյուղում, որտեղ ծանոթացան կոլխոզի աշխատանքի հետ, այցելեցին կոլխոզնիկների, այդ թվում հայրենիք ներգաղթած արտասահմանյան հայերի տները։

Պ-րն Դենիս Նոել Պրիտտը և տիկին Ջուդիթ Տոդդը զրույց ունեցան արտասահմանյան հայերի ընդունելության և տեղավորման կոմիտեի նախագահ ընկ. Բ. Աստվածատրյանի հետ։

Սեպտեմբերի 17-ին պ-րն Դենիս Նոել Պրիտտը և տիկին Ջուդիթ Տոդդը թռան Ստալինգրադ։

Նախքան Երևանից մեկնելը պ-րն Պրիտտը զրույց ունեցավ մամուլի ներկայացու-

ցիչների հետ։ Ստորև բերվում են պ-րն Պրիստի պատասխանները իրեն տրված հարցերին։

«Ինձ խնդրել են պատասխանել երեք հարցի. 1) Որո՞նք են իմ տպավորությունները կարճ ժամանակ Երևանում գտնվելու միջոցին։ 2) Ի՞նչ տպավորություններ եմ ստացել արտասահմանյան հայերի ներգաղթի մասին և ինչպես եմ ես գնահատում դրա նշանակությունը. 3) Ո՞րն է իմ անձնական տեսակետը նախկինում թյուրքերի կողմից խլված հայկական հողերի վերադարձման պահանջի արդարացիության վերաբերյալ։

## ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ

1) Ես տեսա հին և նոր քաղաքը, կուլտուրայի ասպարեզում ձեր նվաճումներից շատերը, ես տեսա ձեր արվեստի որոշ դանձեր, գոհունակությամբ լսեցի հայկական երկու օպերա, այցելեցի մեկ իդեական միջնակարգ դպրոց։ Ես եղա Զվարթնոցում և Էջմիածնում և հետաքրքիր զրույց ունեցա կաթողիկոսի հետ։ Ես եղա մեկ սովխոզում և մեկ կոլխոզում։ Իմ հակիրճ տպավորությունները հետևյալներն են. այստեղ մենք ունենք այն բանի հրաշալի օրինակը, թե ինչպես աշխույժ, սրտագին, աշխատասեր և խաղաղասեր ժողովուրդը քաղում է սովետական սոցիալիստական սիստեմի տնտեսական և հոգևոր առավելությունները։ Հայերը հպարտ և երջանիկ են, որ իրենք ազատ են և հանդիսանում են սովետական քաղաքացիներ, նրանք հպարտ են, որ հանդիսանում են Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների մեծ Միության քաղաքացիներ, որի շատ ժողովուրդներ. ներառյալ նաև հայերը, այնքան մեծ ծառայություն են մատուցել մարդկությանը։

Այն հսկայական նյութական ու կուլտուրական առաջադիմությունը, որ ես տեսա քաղաքում և գյուղում, շշմեցուցիչ և անհավատալի կլիներ, եթե դուք չլինեիք սոցիալիստական երկրի ժողովուրդ և չհանդիսանայիք ազատ ինտելիգենտ ազգ։ Իմ տպավորությունների մեջ մտնում է իհարկե անձամբ իմ նկատմամբ ցուցաբերված մեծ սրտակցության ամենաաշխույժ վերաբերմունքը, բայց այստեղ տեղը չէ գրել իմ անձնական ընկալումների մասին։

2) Ես ուսումնասիրեցի հայրենիք վերադառնալու պրոբլեմը, երկարատև զրույց ունեցա հայրենադարձության կոմիտեի նախագահի հետ։ Ես տեսա հայրենիք վերադարձած դպրոցականներ, ինտելիգենցիայի և գյուղացիների ներկայացուցիչներ։ Այդ բոլորը ինձ վրա ուժեղ տպավորություն թողեց։

Նախ, հայրենիք վերադառնալը հանդիսանում է մեծ մարդասիրության դրսևորում, որը շատ հայերի ազատագրեց այն հոգեկան դժբախտություններից, տարագրությունից և նյութական ձախորդություններից, որ նրանք շարունակում են այժմ կրել արտասահմանյան շատ երկրներում։

Երկրորդ, համեմատաբար այդքան մեծ թվով ձեր հայրենակից նոր քաղաքացիների ընդունման և օգտակար աշխատանքի մասնակից դարձնելու գործնական աշխատանքը այդ բառի լիակատար իմաստով՝ ոչ միայն գովելի է, այլև անհնարին կլիներ մի այլ, ոչ սոցիալիստական պետությունում։ Սովետական Միության սահմաններից դուրս դա շատ մարդկանց անհավատալի կթվա, բայց ես հույս ունեմ, որ ի վիճակի եմ նրանց համոզել։

Հայրենադարձության հետևանքով մի քանի տարուց հետո դուք կարող եք արձանագրել, որ դուք ձեր երկիրը հարստացրել եք զգալի թվով հայ նոր քաղաքացիներով, որոնք այն ժամանակ կհամապատասխանեն ձեր բարձր պահանջներին։

Ես լավ տեսնում եմ, որ հայրենադարձությունը լայն նպատակ և կարևորություն ունի այժմ և հետագայում, բայց ես սահմանափակվում եմ անձամբ իմ ստացած տպավորություններով։

3) Միանգամայն ակներև է, որ հայ ժողովուրդը ունենալով ազգային գոյության իրավունք, արդարացի է իր այն պահանջներում, որ վերաբերում են հայերին իրենց պատկանող և իրենց կողմից կառավարվող մեկ միասնական տերիտորիան պետության մեջ վերամիավորվելուն. Դա դժվար է վիճարկել։ Խոսքը տարրական արդարության մասին է։ Աշխարհագրական առանձնահատուկ այն վիճակում, որի մեջ գտնվում են Հայաստանում հայերը, նրանց պահանջը, այն է՝ ապրել որպես ազատ հայկական հողում,— բավարարելու միակ և ամենապարզ ուղին է այժմյան սահմանի ուղղումը և այնպիսի սահմանի հաստատումը, որը հնարավորություն կտա բոլոր հայերին միավորվել Հայկական ՍՍՌ-ում։

Այդ լուծումը ինձ թվում է արդարացի և, այն ամենը, ինչ որ ես կարող եմ անել այդ լուծումը արագացնելու համար, ես կանեմ։

Դ. Ն. ՊՐԻՏՏ